

2021

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՐՏԱՇԵՍ Ա ԱՇԽԱՐՀԱԿԱԼ  
ԲԱՐԵՊԱՇՏ

ՂԵԿԱՎԱՐ պ.գ.թ. ԿԱՐԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԼՈՒՍԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՊԱՏՐԱՍՏ Է  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ  
2021



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ.....	4
ԱՐՏԱՇԵՍ Ա ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԲԱՐԵՊԱՇՏ.....	5
Արտաշես Ա Բարեպաշտ և Արտաշատի պայմանագիրը.....	7
Հողային բարեփոխումը.....	9
Ռազմավարչական և այլ բարեփոխումներ.....	9
Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը.....	10
ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԵՊԱՇՏ.....	12
ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ, ՄԻԱՎՈՐԻՉ ՀԱՂԹԱՐՇԱՎՆԵՐ.....	12
Ռազմավարությունը.....	12
Արշավանքների նախապատրաստումը.....	13
Արշավանքները.....	14
Արշավանքների արդյունքների ամրագրումը.....	15
Եզրակացություն.....	17
ԳՐԱԿԱՆՈՒՅԹՈՒՆ.....	21

## ՆԱԽԱԲԱՆ

Ք. ա. III դ. երկրորդ կեսը Առաջավոր Ասիայում ուժերի նոր վերախմբավորումների ժամանակաշրջան դարձավ: Սելևկյան պետությունը հետզհետե թուլանում էր, ներքին երկպառակությունների եւ ապստամբությունների պատճառով նրա տիրակալները, չէին կարողանում պահպանել Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան ձգվող իրենց հսկայական տիրույթները:

Արտաշես Ա-ն (Ք. ա. 189-160թթ.) հիմնադիրն է Արտաշեսյան հարստության, որն իշխել է Հայաստանում Ք. ա. 189- Ք.հ. 1թթ.: Նա հայտնի է որպես մեծագույն բարեփոխիչ, պետական եւ ռազմական արտասովոր հեռատեսություն եւ գլխարտություն ունեցող գործիչ, ինչի համար էլ արժանացել է «Բարեպաշտ» մականվանը: Նա եղել է Զարեհի որդին՝ Երվանդունների տոհմից: Արտաշես Ա սելևկյան բանակում նախապես եղել է բարձրաստիճան զինվորական: Արտաշեսի

օրոք խիստ սրվել էին հողի մասնավոր սեփականատերերի և գյուղական համայնականների միջև հակասությունները: Արտաշես Ա-ն զգալի ջանքեր թափեց ռազմական գործի վերակառուցման ուղղությամբ: Նա ստեղծեց կանոնավոր ու լավ զինված բանակ: Երկրի սահմանների պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար նա կազմեց չորս զորավարություններ: Արտաշես Ա-ն մեծապես հայտնի է նաև իր բարենորոգչական և վերափոխիչ քաղաքականությամբ, որ նա իրականացրել է Մեծ Հայքի տնտեսական, վարչական, ռազմական և այլ բնագավառներում: Կարևոր նշանակություն ունեցավ հատկապես երկրի նոր մայրաքաղաք Արտաշատի հիմնադրումը:

Դժվար է առանձնացնել նրա գործունեության բնագավառներից կամ իրականացված բարեփոխումներից մեկը: Բայց որքան էլ մեծ լինեն Արտաշեսի ռազմական հաջողությունները եւ որքան մեծ՝ նրա տարած հաղթանակների նշանակությունը, նրա ամենակարեւոր ձեռնարկումն, այնուամենայնիվ, սահմանների ձեւավորումն (սահմանաքարերի տեղադրման միջոցով) ու հողային բարեփոխման իրականացումն էր: Հայոց արքան հողաբաժանման այնպիսի հիմնարար համակարգ է ձեւավորում, որն առանց էական փոփոխությունների գործում էր նաեւ միջին դարերում:

Սելեւկյան պետության թուլացումով՝ տարածաշրջանում ուժերի վերաբաշխումը որակապես նոր հնարավորություններ էր ստեղծում Մեծ Հայքի հզորացման համար, եւ պետք էր փոխել պետության արտաքին քաղաքականության կարեւորագույն կողմնորոշիչները: Սակայն, Արտաշես Ա-ի գործունեության համար բնութագրական չէր ավելորդ շտապողականությունը:

Արտաշես Ա-ի բուն գործունեության արդյունքն էր Մեծ Հայքի հիմնական մասի միավորումն ու հզորացումը, որով պետությունն աստիճանաբար վերածվում էր տարածաշրջանի գորեղ պետության: Իր գահակալման ամբողջ ընթացքում ակտիվ արտաքին քաղաքականություն վարող Արտաշես Ա-ն թեեւ երկրի միավորումն իրականացնում էր զինված ուժի կիրառմամբ, սակայն ինքնանպատակ բռնություններ թույլ չէր տալիս: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի հիշողության մեջ նա մնաց նաեւ «Բարի» պատվանունով:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՅՈՒՄԸ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

Ք. ա. III դ. երկրորդ կեսը Առաջավոր Ասիայում ուժերի նոր վերախմբավորումների ժամանակաշրջան դարձավ: Սելևկյան պետությունը հետզհետե թուլանում էր, քանզի գրեթե չընդհատվող պատերազմների, ներքին երկպառակությունների եւ ապստամբությունների պատճառով նրա տիրակալները,

չէին կարողանում պահպանել Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան ձգվող իրենց հսկայական տիրույթները: Ք. ա. 255թ. անկախացած եւ հետագա մեկ եւ կես դարերի ընթացքում հզորացող Պարթևստանն արեւելքից, եւ Առաջին ու Երկրորդ Պունիկյան պատերազմներում (Ք. ա. 264-241թթ. եւ 218-201թթ.) Կարթագենին հաղթած ու Բալկաններում հիմնավորվող Հռոմը՝ արեւմուտքից, հզոր ախոյաններ էին դարձել Սելևկյանների համար: Այդուհանդերձ, Սելևկյան պետությունից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Հայկական լեռնաշխարհը Ք. ա. III դարում գտնվում էր նրա տիրակալների քաղաքական շահերի ոլորտում: Սակայն արդեն Ք. ա. II դ. սկզբին իրավիճակը կտրուկ փոխվում է: Ք. ա. 190թ. Մագնեսիայի մոտ հռոմեական բանակից ծանր պարտություն կրելով՝ Սելևկյանները ստիպված էին հրաժարվել տարածաշրջանային առաջատարի իրենց դերից: Երկրի ռազմաքաղաքական հզորացման գործընթացն Արտաշեսը շրջահայացորեն սկսեց ռազմական բարեփոխումներից: Աշխատանքները սկսվում են հայոց բանակի համալրման համակարգի վերակառուցումով: Զորահավաքի կազմակերպումը հեշտացնելու համար երկիրը բաժանվում է 120 վարչական միավորների՝ գավառների, որոնք անտիկ պատմիչները կոչել են ստրատեգիաներ:

## **ԱՐՏԱՇԵՍ Ա ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԲԱՐԵՊԱՇՏ՝**

Արտաշես Ա-ն (Ք. ա. 189-160թթ.) հիմնադիրն է Արտաշեսյան հարստության, որն իշխել է Հայաստանում Ք. ա. 189- Ք.հ. 1թթ.: Նա հայտնի է որպես մեծագույն բարեփոխիչ, պետական եւ ռազմական արտասովոր հեռատեսություն եւ գլխավորություն ունեցող գործիչ, ինչի համար էլ արժանացել է «Բարեպաշտ» մականվանը: Հայոց պատմության ամենանշանակալի ու փառաբանված ղեկավարներից մեկն է հայոց արքա, Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես Ա Բարեպաշտը, որը գահակալել է մ.թ.ա. 189-160 թվականները: Արտաշես Ա սելևկյան բանակում նախապես եղել է բարձրաստիճան զինվորական: Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծը Երվանդունիներից նվաճելով Հայաստանի զգալի մասը, մ.թ.ա. շուրջ 200թ. նրա կառավարիչ է կարգել Արտաշես Ա-ին: Մագնեսիայի

---

<sup>1</sup>Հայկականսովետականհանրագիտարան, (հ. 2, էջ 139):

ճակատամարտում, Հռոմից Անտիոքոս III կրած պարտությունից հետո, Արտաշես Ա անկախ է հռչակել Հայաստանը և հիմնել նոր արքայատոհմ, որը պատմագրության մեջ հիմնադիրի անունով կոչվում է Արտաշեսյան: Արտաշես Ա թագավորությունը սկզբում սահմանափակված է եղել Մեծ Հայքի կենտրոնական մարզերով: Կարճ ժամանակաշրջանում նա վերամիավորել է Երվանդունիների պետությունից մ.թ.ա. III դ. վերջին կամ մ.թ.ա. II դ. սկզբին անջատված ծայրագավառները, ստեղծել միաձուլ պետություն, որի հզորությունն ու կենսունակությունը խարսխված է եղել միասնական էթնիկական հիմքի վրա: Միացյալ հայկական պետությունից դուրս են մնացել միայն Փոքր Հայքը եւ Ծոփքը: Արտաշես Ա վարել է Մերձավոր Արեւելքում գերիշխող Մելեկյան պետության թուլացման քաղաքականություն, հմտորեն օգտագործել ինչպես հարևան երկրների, այնպես էլ Հռոմի հակասելեկյան դիրքավորումը: Սակայն, Արտաշես Ա չի դաշնակցել Հռոմին, ավելին, ապաստան է տվել Հռոմի անհաշտ հակառակորդ Կարթագենի զորավար Հաննիբալին: Մ.թ.ա. 165թ. հարավում Արտաշես Ա բախվել է սելեկյան թագավոր Անտիոքոս IV Եպիփանեսի հետ, հաջողությամբ ետ մղել նրա հարձակումը եւ պաշտպանել երկրի անկախությունը: Նա կատարել է հողային բարենորոգումներ՝ նպատակ ունենալով կարգավորել հողի մասնավոր սեփականության զարգացման ընթացքը, մեղմել հողատերերի եւ գյուղական համայնքների միջեւ ստեղծված հակասությունները: Պահպանվել են գյուղերի եւ ագարակների հողաբաժան սահմանաքարերից մի քանիսը, որոնք ունեն Արտաշես Ա անունով արամեերեն արձանագրություններ: Արտաշես Ա երկիրը վարչականորեն բաժանել է 120 ստրատեգիաների, որոնց կառավարել են ստրատեգոսները: Արտաշես Ա մեծացրել է կանոնավորել է բանակը, այն բաժանել չորս կողմնապահ զորավարությունների, կազմավորել արքունի զորձակալությունները: Խրախուսել է քաղաքակաշիւնությունը, գիտության եւ արվեստի զարգացումը: Նրա ժամանակ կառուցվել է Արտաշատ մայրաքաղաքը: Վախճանվել է ծեր հասակում: Գահը ժառանգել է ավագ որդին՝ Արտավազդ Ա:

## Արտաշես Ա Բարեպաշտ և Արտաշատի պայմանագիրը<sup>2</sup>

Արտաշես Ա թագավորը թագավորել է մ.թ.ա. 189 թվականից սկսված մինչև մ.թ.ա. 160 թվականը: Նա եղել է Զարեհի որդին՝ Երվանդունների տոհմից: Արտաշես Ա սելևկյան բանակում նախապես եղել է բարձրաստիճան զինվորական: Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծը, Երվանդունիներից նվաճելով Հայաստանի զգալի մասը նրա կառավարիչ է կարգել Արտաշես Ա-ին մ.թ.ա. 200 թվականին: Մագնեսիայի ճակատամարտում Հռոմից Անտիոքոս III-ի կրած պարտությունից հետո, Արտաշես Ա անկախ է հռչակել Հայաստանը և հիմնել նոր արքայատոհմ, որն իր հիմնադրի անունով պատմագրության մեջ կոչվում է Արտաշեսյան: Արտաշես Ա-ի թագավորությունն սկզբում սահմանափակված է եղել Մեծ Հայքի կենտրոնական մարզերով:

Հետոնրանմիացել է մ.թ.ա III-րդ դարի վերջին անջատված գավառները, որոնք անջատվել էին Երվանդունիների օրոք: Արտաշես Ա արշավում է դեպի արևելք և հասնում Կասպից ծովի ափերը, որի շնորհիվ Մեծ Հայքին են միացվում Փայտակարանը և Կասպից երկիրը: Միացյալ հայկական պետությունից դուրս են մնացել Փոքր Հայքը, Կոմագենեն և Ծոփքը: Արտաշես Ա վարել է Մերձավոր Արևելքում գերիշխող Սելևկյան պետությունը թուլացնելու քաղաքականությունը, հմտորեն օգտագործել ինչպես հարևան երկրների, այնպես էլ Հռոմի հակա սելևկյան դիրքավորումը: Սակայն Արտաշես Ա-ն չի դաշնակցել Հռոմի հետ, ավելին, ապաստան է տվել Հռոմի անհաշտ հակառակորդին՝ Կարթագենի զորավար Հաննիբալին: Մ.թ.ա. 165 թվականին հարավում Արտաշես Ա բախվել է սելևկյան թագավոր Անտիոքոս IV Եպիփանեսի հետ, հաջողությամբ ետ մղել նրա հարձակումը և պաշտպանել երկրի անկախությունը: Նա կատարել է հողային բարենորոգումներ: Նա ցանկացել է կարգավորել հողի մասնավոր սեփականության զարգացման ընթացքը, մեղմել հողատերերի և գյուղական համայնքների միջև ստեղծված հակասությունները: Պահպանվել են գյուղերի և ագարակների հողաբաժան

<sup>2</sup><https://martinatoyannd.wordpress.com/2020/11/16/%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A5%D5%BD-%D5%A1-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF-%D6%87-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A1%D5%BF%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1/>

սահմանաքարերից մի քանիսը, որոնք ունեն Արտաշես Ա-ին անունով արամեերեն արձանագրություններ: Արտաշես Ա երկիրը վարչականորեն բաժանել է 120 ստրատեգիաների, որոնք կառավարել են ստրատեգոսները: Արտաշես Ա մեծացրել և կանոնավորել է բանակը, այն բաժանել չորս կողմնապահ զորավարությունների, կազմավորել արքունի գործակալությունները: Խրախուսել է քաղաքաշինությունը, գիտության և արվեստի զարգացումը: Նրա ժամանակ կառուցվել է Արտաշատ մայրաքաղաքը: Արտաշեսի ջանքերով Հայաստանը դարձավ ընդարձակ և ուժեղ պետություն, որը, բնականաբար, կարիք էր զգում նաև ներքին լայն բարեփոխումների: Արտաշեսի վերափոխիչ գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արևելքում տարածված սովորույթ էր, որ նոր արքայատոհմի հիմնադիրը, գահ բարձրանալով, նոր մայրաքաղաք էր կառուցում: Արտաշատը կառուցում է մոտՔ.ա. 185 թվականին Արարատյան դաշտում՝ Երասխ և Մեծամոր գետերի հատման մոտ: Քաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հունահռոմեական պատմիչներն այն անվանել են «Հայկական Կարթագեն»: Արտաշեսը կառուցել է նաև Զարեհավան, Զարիշատ և այլ քաղաքներ:

Արտաշատի պայմանագիրը կնքվել է հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսի և հայոց արքա Տիգրան Մեծի միջև: Մ.թ.ա 66 թվականի գարնանը Մեծ Հայքի վրա են հարձակվում պարթևական զորքերը՝ իրենց կորցրած հողերը վերագրավելու և Տիգրան Կրտսերին հայկական գահի վրա բարձրացնելու նպատակով: Հայաստան մտնելուն պես Պոմպեոսը պաշարում է Արտաշատը, սակայն հայկական զորքերի կողմից երկար դիմադրությունից հետո Պոմպեոսը վերադառնում է հայրենիք՝ պաշարումը հանձնարարելով Տիգրան Կրտսերին: Հռոմեական զորքերի հրամանատարի հեռացումից հետո, Տիգրան Մեծը հարձակվում է և հաղթում որդուն, որին հաջողվում է փախչել: Պոմպեոսը, Միհրադտին պարտության ենթարկելուց հետո, աշնանը հարձակվում է Մեծ Հայքի վրա և շարժվում դեպի Արտաշատ: Տիգրան Մեծի համար ստեղծվում է բարդ իրավիճակ: Նա միայն իր բանակով, առանց դաշնակից ուժերի չէր կարող դիմակայել Հին Հռոմին և Պարթևական թագավորությանը: Մեծ Հայքի այդ ժամանակ կայուն չէր նաև ներքին դրությունը: Այս ծանր պայմաններում մ.թ.ա 66 թվականի աշնանն Արտաշատում հաշտության պայմանագիր է կնքում Հայաստանի և Հռոմի միջև:



## Հողային բարեփոխումը

Արտաշեսի օրոք խիստ սրվել էին հողի մասնավոր սեփականատերերի և գյուղական համայնականների միջև հակասությունները: Ազարակատերերն անարգել զավթում էին համայնական հողերն ու գյուղացիներին զրկում իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից: Բնականաբար, հողագուրկ գյուղացին այլևս չէր կարող հարկ վճարել պետությանը, դեռ ավելին՝ շահագրգռված չէր և չէր կարող զինվորագրվել բանակին: Համայնական հողերի անգուսպ յուրացումը տեղիք էր տալիս զինված ընդհարումների: Պետությունը չէր կարող անտարբեր դիտողի դերում լինել:

Մոտ Ք.ա. 180 թ. **Արտաշեսը** հրապարակում է հրամանագիր հողային բարեփոխման վերաբերյալ, որի համաձայն՝ մասնավոր հողային տնտեսությունների (ազարակներ) սահմանները հստակորեն սահմանազատվում են համայնքին պատկանող հողերից: Այս հրամանագիրը մի կողմից՝ օրինականացնում էր ազարակատերերի մինչ այդ կատարած զավթումները, իսկ մյուս կողմից՝ պահպանում էր համայնքային սեփականությունը: Հողային բարեփոխման վերաբերյալ պատմահայրը վկայում է, թե «Արտաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ազարակների սահմանները..., կոփել է սովել քառակուսի քարեր և տնկել հողի մեջ»: Սահմանաքարերից շուրջ քսանը, որ ունեն Արտաշեսի անունով արամեերեն արձանագրություններ, հայտնաբերվել են Հայաստանի տարբեր շրջաններում: Դրանցից մի քանիսն այժմ ցուցադրվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

## Ռազմավարչական և այլ բարեփոխումներ

Արտաշես Ա-ն զգալի ջանքեր թափեց ռազմական գործի վերակառուցման ուղղությամբ: Նա ստեղծեց կանոնավոր ու լավ զինված բանակ: Երկրի սահմանների պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար նա կազմեց չորս զորավարություններ: Մովսես Խորենացին այդ մասին վկայում է. «Զորքի իշխանությունն էլ (Արտաշեսը) չորս մասի է բաժանում արևելյան կողմի զորքը թողնում է (իր որդի) Արտավազդին, արևմտյանը տալիս է (իր որդի) Տիրանին, հարավայինը վստահում է (իր զորավար) Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ (իր որդի)

Զարեհին»։ Պետության կառավարումը բարելավելու նպատակով Արտաշես Ա-ն թագավորությունը բաժանեց 120 վարչական շրջանների կամ գավառների, որոնք հունա-հռոմեական հեղինակներն անվանում էին ստրատեգիաներ կամ պրեֆեկտուրաներ։ Սրանց մի մասում հետագայում ձևավորվեցին նախարարական իշխանությունները։ Արտաշեսը կարգավորեց արքունի գործակալությունները։ Երկրի կառավարման կարևորագույն գործակալությունները՝ սպարապետությունը և հազարապետությունը, հանձնեց իր մերձավորներին։ Թագավորական իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում բարձրացնելու նպատակով Արտաշես Ա-ն սահմանեց թագավորի նախնիների պաշտամունքի կարգը։ Արտաշատում կառուցեց Հայոց աշխարհի հովանավոր Անահիտ աստվածուհու տաճարը։ Այնտեղ կանգնեցվեցին Արտաշեսի նախնիների արձանները, որոնց ժողովուրդը պետք է երկրպագեր։ Տաճարներ կառուցվեցին նաև Հայաստանի մյուս քաղաքներում, ուր, բացի հայոց աստվածներից, դրվեցին նաև Զևսի, Հերակլեսի, Ապոլոնի, Աթենասի, Ափրոդիտեի և հունական այլ աստվածների արձանները։ Արտաշեսը ճշգրտել է տվել օրացույցը, հստակեցրել տոմարը և կատարել բազում այլ բարեփոխումներ։ Արտաշեսը հայտնի է «Բարի» և «Բարեպաշտ» տիտղոսներով։ Կատարած բազում նշանավոր գործերի համար Արտաշես Ա-ի մասին ժողովուրդը ստեղծել է երգեր, վեպեր, ուր գովերգվել են նրա իմաստությունն ու քաջությունը, շինարարական գործունեությունը, շեշտվել է նրա սերը հայրենիքի նկատմամբ։ Արտաշեսի նկատմամբ ժողովրդի սերը արտահայտվել է նաև նրանում, որ հայերն իրենց օտար ծագումով, բայց սիրելի թագավորներին անվանել են Արտաշես (Զենոն, Տրդատ Ա և այլն)։ Արտաշեսը մահացել է Ք.ա. շուրջ 160 թ.։

## Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը

Արտաշես Ա-ն մեծապես հայտնի է նաև իր բարենորոգչական և վերափոխիչ քաղաքականությամբ, որ նա իրականացրել է Մեծ Հայքի տնտեսական, վարչական, ռազմական և այլ բնագավառներում։ Կարևոր նշանակություն ունեցավ հատկապես երկրի նոր մայրաքաղաք Արտաշատի հիմնադրումը։ Քաղաքը կառուցվել է Այրարատյան դաշտում, Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում։ Արտաշատի

հիմնադրման վերաբերյալ արժեքավոր վկայություն է թողել Պատմահայր Մովսես Խորենացին. «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են և այնտեղ բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»: Հույն պատմիչ Պլուտարքոսի հավաստմամբ, քաղաքի տեղանքն ընտրել է Կարթագենի վտարանդի զորավար Հաննիբալը, որն այդ ժամանակ ապաստան էր գտել Հայաստանում: Նա է նաև կազմել քաղաքի հատակագիծը և, թագավորի առաջարկությամբ, գլխավորել շինարարական աշխատանքները. «Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»: Հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ քաղաքը կառուցվել է ներկայիս Խոր Վիրապի տեղում, առևտրական նշանավոր տարանցիկ մայրուղիների խաչմերուկում: Քաղաքը շրջափակված է եղել բարձր, հզոր պարիսպներով, խրամով և պատվարով: Քաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հռոմեացիներն այն անվանել են «Հայկական Կարթագեն»: Քաղաքը բնակեցնելու համար Արտաշեսը կարգադրում է այնտեղ տեղափոխել Երվանդաշատի բնակչության և ռազմական արշավանքների ժամանակ գերեվարվածների մի մասին: Շուտով Արտաշատը դարձավ Առաջավոր Ասիայի քաղաքական, տնտեսական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկը: Արտաշես Ա-ի նախաձեռնությամբ թագավորությունում կառուցվեցին մի շարք այլ քաղաքներ, ինչպես օրինակ՝ Զարեհավանը, Զարիշատը և այլն: Այդ քաղաքներն անվանվել են ի պատիվ Արտաշեսի հոր՝ Զարեհի:



## ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԵՊԱՇՏ

### ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ, ՄԻԱՎՈՐԻՉ ՀԱՂԹԱՐՇԱՎՆԵՐ

Դժվար է առանձնացնել նրա գործունեության բնագավառներից կամ իրականացված բարեփոխումներից մեկը: Բայց որքան էլ մեծ լինեն Արտաշեսի ռազմական հաջողությունները եւ որքան մեծ՝ նրա տարած հաղթանակների նշանակությունը, նրա ամենակարեւոր ձեռնարկումն, այնուամենայնիվ, սահմանների ձեւավորումն (սահմանաքարերի տեղադրման միջոցով) ու հողային բարեփոխման իրականացումն էր: Հայոց արքան հողաբաժանման այնպիսի հիմնարար համակարգ է ձեւավորում, որն առանց էական փոփոխությունների գործում էր նաեւ միջին դարերում:



### Ռազմավարությունը

Երկրի ռազմաքաղաքական հզորացման գործընթացն Արտաշեսը շրջահայացորեն սկսեց ռազմական բարեփոխումներից: Աշխատանքները սկսվում են հայոց բանակի համալրման համակարգի վերակառուցումով: Ջորահավաքի կազմակերպումը հեշտացնելու համար երկիրը բաժանվում է 120 վարչական միավորների՝ գավառների, որոնք անտիկ պատմիչները կոչել են ստրատեգիաներ: Դրանցից յուրաքանչյուրի ռազմական պետին՝ ստրատեգոսին (գավառապետին) է հանձնվել իր շրջանի զինված ուժերի ղեկավարումը: Պատերազմների ժամանակ գավառապետերը թագավորի առաջին իսկ կոչով պարտավոր էին իրենց հեծյալ ու հետեւակ ջոկատներով ներկայանալ նրան: Գավառների կողմից թագավորին ներկայացվող զորքի թիվը որոշվում էր ըստ բնակչության քանակի: Արտաշես Ա-ն ուշադրություն դարձրեց երկրի սահմանների ամրացման խնդրին, քանզի օտար

ուժերի հարձակման թիրախ հանդիսացող երկիրը նույնիսկ հաղթական պատերազմի ժամանակ չէր խուսափում ավերածություններից: Հակառակորդի առաջխաղացմանը խոչընդոտելու նպատակով սահմանամերձ հյուսիսային, արևելյան, հարավային, արևմտյան շրջաններում (Գուգարք, Նոր Շիրական, Կորդուք եւ Աղձնիք) ստեղծվում են մշտականգորք պահելու իրավունք ունեցող չորս բդեշխություններ:

«Չորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում (Արտաշեսը). արևելյան կողմի գորքը թողնում է Արտավազդին, արևմտյանը տալիս է Տիրանին, հարավայինը վստահում է Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ Չարեհին»<sup>3</sup>:

Բդեշխներն իրենց գորամասերով պետք է կաշկանդեին հակառակորդի գործողությունները, խոչընդոտեին նրա առաջխաղացմանն ու ժամանակ շահեին, որպեսզի թագավորի շուրջը միավորված գորքերը հակառակորդին ընդառաջ շարժվեին: Առանձին դեպքերում, երբ պետություն ներխուժած հակառակորդը փոքրաթիվ էր, բդեշխն իր ուժերով էր կարողանում ջախջախել նրան ու դուրս շարտել երկրից:



### Արշավանքների նախապատրաստումը

Մեղեկյան պետության թուլացումով՝ տարածաշրջանում ուժերի վերաբաշխումը որակապես նոր հնարավորություններ էր ստեղծում Մեծ Հայքի հզորացման համար, եւ պետք էր փոխել պետության արտաքին քաղաքականության կարևորագույն կողմնորոշիչները: Սակայն, Արտաշես Ա-ի գործունեության համար բնութագրական չէր ավելորդ շտապողականությունը: Նախկինում կորցրած ծայրագավառների միավորման նպատակով Արտաշեսը քայլեր է ձեռնարկում նախապատրաստական բոլոր միջոցառումների ավարտումից եւ այդպիսով ակտիվ

<sup>3</sup>Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք Բ, Գլուխ ԾԳ:

ռազմական քաղաքականության համար նախադրյալների ստեղծումից հետո: Ք. ա. III դ. Սելևկյան տերության դեմ պայքարում Մեծ Հայքը տարածքային կորուստներ էր կրել: Մակեդոնացիներին դաշնակցած Վիրքը Հայաստանից խլել էր հյուսիսի սահմանային շրջանները, իսկ երկրի արեւելքում անջատվել էր Փայտակարանը, որը պատմիչներին հայտնի է նաև Կասպիանե կամ Կասբից երկիր ձեւերով: Այստեղ Ք. ա. II դ. սկզբին իշխում էր Չարդամանուր: Իրենք՝ Սելևկյանները, հարավում գրավել էին Տնօրիքը: Արեւմուտքում Մեծ Հայքից առանձնացած էին Ծոփքի անկախ թագավորությունը եւ Բարձր Հայքի մի մասը (տե՛ս քարտեզը): Այժմ Արտաշեսի խնդիրն էր վերականգնել թագավորության նախկին սահմանները: Ուստի, երբ ապագա հաղթարշավի համար բոլոր նախապայմանները ստեղծված էին, նա կազմակերպում է ռազմական արշավանքներ այդ չորս ուղղություններով:

### Արշավանքները

Արեւելքում Սմբատ Բագրատունու գլխավորած ուժերը ազատագրում են Փայտակարանը, Պարսպատունիքը եւ դրանց միջև ընկած տարածքները: Հայոց բանակի տարած հաղթանակն էլ ավելի մեծ արժեք է ստանում, քանի որ, Մովսես Խորենացու վկայությամբ, Կասբից երկրի թագավոր Չարդամանուրը պատերազմում գերվում է: Հյուսիսում Սմբատ զորավարն ազատագրում է Պարխարի լեռնալանջերը, Կղարջքը եւ Գուգարք աշխարհի մի մասը: Չարգացնելով հաջողությունները՝ հայոց զորքերը հյուսիսային արշավանքի արդյունքում հպատակեցնում են Վիրքը, ուր կուսակալ է կարգվում արքայազն Չարեհը: Հետագայում վրացիները երկու անգամ ապստամբում են եւ, նույնիսկ, գերում Չարեհին: Սակայն Արտաշեսի եւ Սմբատ Բագրատունու զորքը երկու անգամ էլ հնազանդեցնում է ապստամբներին ու ազատում արքայազնին: Մեծ Հայքի ազդեցության ոլորտում հայտնվելով՝ Վիրքը երկար ժամանակով դադարում է խոչընդոտ լինել արեւմուտքում եւ հարավում ակտիվ քաղաքականության պատրաստվող Արտաշեսի, ինչպես նաև նրա հաջորդների համար: Ի վերջո, Վիրքը պարտավորվում է 10 հազարանոց օգնական զորք տրամադրել Մեծ Հայքին եւ Արտաշեսի պատկերով դրամ հատել: Արեւմուտքում իր գործունեությունը ծավալելիս՝ Արտաշեսը համագործակցում է Ծոփքի արքա Չարեհի հետ: Համատեղ ուժերով նրանք Կատանիայից (Ծոփքից արեւմուտք ընկած

երկիր) հետ են գրավում Եկեղյաց գավառը, Անտիտավրոսի արեւելյան ստորոտի հողերն ու բաժանում միմյանց միջեւ: Պոնտոսում բնակվող քայուրներից ու մոսյունոյկներից հայկական գորքերն ազատագրում են Կարինի եւ Դերջանի շրջանները: Հարավում տակավին Սելեւկյանների տիրապետության տակ էր մնում Տմորիքը: Օգտվելով Եգիպտոսի դեմ Սելեւկյան տերության պատերազմից՝ հարավակողմի հայկական գորքերի հրամանատար նշանակված Սմբատ Բագրատունին Ք. ա. 168թ. ազատագրել է հայկական այդ երկրամասը: Երեք տարի հետո Սելեւկյանները փորձել են հետ նվաճել այն, սակայն հայոց գորքերի համառ դիմադրության արդյունքում անհաջողության են մատնվել (տե՛ս քարտեզը): Արտաշեսի ծրագրերի մեջ էր մտնում նաեւ Ծովքի վերամիավորումը Մեծ Հայքին: Սակայն, դա իրականացվեց շուրջ յոթ տասնամյակ անց միայն՝ Տիգրան Բ Մեծի օրոք (Ք. ա. 94թ.): Մեծ Հայքի միավորմամբ Արտաշեսի ռազմաքաղաքական գործունեությունը չի սահմանափակվել: Սելեւկյանների (ինչպես նաեւ վերջիններիս դաշնակցած Պոնտոսի ու Փոքր Հայքի) դեմ տարվել է նաեւ դիվանագիտական պայքար: Ք. ա. 183թ. Պոնտոսն ու Փոքր Հայքը պատերազմ են սկսել Կապադովկիայի եւ վերջինիս դաշնակիցների դեմ, սակայն քառամյա պայքարից հետո պարտություն են կրել: Այս պատերազմում Արտաշեսը պաշտպանում էր երկրորդ խմբավորմանը՝ ձգտելով թուլացնել Սելեւկյանների ազդեցությունը եւ գրավել Փոքր Հայքը: Իսկ պատերազմի վերջում նա հանդես եկավ միջնորդի դերում: Բացառված չէ, որ Կատանիայից գրավված վերոհիշյալ տարածքներն իրականում ձեռք են բերվել Փոքր Հայքից՝ այդ միջնորդության արդյունքում: Սելեւկյանների դեմ պայքարի վերջին դրվագն էր Արտաշեսի աջակցությունը Մարաստանի սատրապ Տիմարքոսին, որը Սելեւկյան տերության դեմ Ք.բա. 162-160թթ. ապստամբության արդյունքում ստեղծեց անկախ պետություն:

### **Արշավանքների արդյունքների ամրագրումը**

Հայաստանի հզորացման ու բնական սահմանների վերականգնման քաղաքականությունը հենց սկզբից ավելի մեծ, բարեկարգ ու պաշտպանված մայրաքաղաք հիմնադրելու անհրաժեշտություն էր առաջ բերել: Մայրաքաղաքն Արտաշեսը կառուցում է Արաքս եւ Մեծամոր գետերի միախառնմամբ կազմված

թերակղզում՝ մի բլրի վրա եւ իր անվամբ կոչում Արտաշատ: Այն երեք կողմից շրջապատված էր գետով եւս հզոր պարիսպներով, իսկ չորրորդ կողմից՝ խրամով ու պատվարով: Արտաշեսը շենացնում է քաղաքը՝ այն բնակեցնելով տեղացիներով եւ նախկին մայրաքաղաք Երվանդաշատից բերված բնակչությամբ: Պատմիչների պնդմամբ՝ Արտաշատը կառուցելիս Արտաշես Ա-ին օգտակար խորհուրդներով օգնել է կարթագենցի տաղանդավոր գորավար Հաննիբալը (Հաննիբալ Բարկա, Ք. ա. 247-183թթ.), որն այդ ժամանակ հանգրվանել էր Մեծ Հայքում: Հաննիբալին է վերագրվում նաեւ քաղաքի հատակագծի կազմումը եւ շինարարական աշխատանքների ղեկավարումը:

«Հայաստանի քաղաքներն են Արտաքսատան (որը կոչում են եւ Արտաքսիասատա, որը Հաննիբալը կառուցել է Արտաքսիաս թագավորի համար) եւս Արքսատան, երկուսն էլ Արաքսի վրա... Արտաքսատան երկրի արքայանիստն է. գտնվում է գետա(թեւի) կազմած թերակղզու վրա, նրա պարիսպը շուրջանակի պատում է գետը՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը շրջափակված է փոսով եւ պատնէշով»<sup>4</sup>:

«Պատմում են, թե կարթագենցի Հաննիբալը... գնաց Արտաշես Արմենի արքունիքը, որին բազում պիտանի խորհուրդներ եւ հրահանգներ տվեց: Բացի այդ, նկատելով չօգտագործված ու լքված, սակայն բացառիկ հարմարագույն եւ ակնահաճո մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծելով քաղաքի հատակագիծը՝ կանչեց Արտաշեսին եւ ցույց տալով նրան այդ վայրը՝ համոզեց քաղաք կառուցել այստեղ: Թագավորն ուրախությամբ համաձայնվեց եւ խնդրեց Հաննիբալին, որ նա անձամբ իր վրա վերցնի շինարարական աշխատանքների վերակացությունը: Կառուցվեց մեծ եւ շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը եւ այն հռչակեց Հայաստանի մայրաքաղաք»<sup>5</sup>:

<sup>4</sup>Ստրաբոն, Աշխարհագրություն, XI, 14

<sup>5</sup>Պլուտարքոս, Զուգահեռակենսագրություններ, Լուկուլլոս, XXXI:



## Եզրակացություն

Արտաշես Ա-ի բուն գործունեության արդյունքն էր Մեծ Հայքի հիմնական մասի միավորումն ու հզորացումը, որով պետությունն աստիճանաբար վերածվում էր տարածաշրջանի գորեղ պետության: Իր գահակալման ամբողջ ընթացքում ակտիվ արտաքին քաղաքականություն վարող Արտաշես Ա-ն թեև երկրի միավորումն իրականացնում էր զինված ուժի կիրառմամբ, սակայն ինքնանպատակ բռնություններ թույլ չէր տալիս: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի հիշողության մեջ նա մնաց նաև «Բարի» պատվանունով<sup>6</sup>:

**Մենք առանձնացրել ենք հետաքրքիր փաստեր նրա և նրա գահակալության մասին:**

Հայոց պատմության ամենանշանակալի ու փառաբանված ղեկավարներից մեկն է հայոց արքա, Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես Ա Բարեպաշտը, որը գահակալել է մ.թ.ա. 189-160 թվականները: Իր հաղթանակների ու բարեփոխումների շնորհիվ Արտաշեսը ժողովրդի սիրելիներից է մինչ օրս, այդ է պատճառը, որ նրա անվան շուրջ բազմաթիվ ավանդազրույցներ են հյուսվել:

**Հայոց ավանդապատումը վկայում է՝**

Ըստ հայոց ավանդապատման, մ.թ.ա. 220 թվականին Երվանդ Դ արքան բռնագրավել էր հայոց գահը դրա օրինական ժառանգներից, այդ թվում՝ Արտաշեսից, Երվանդը սպանել էր բոլոր թագաժառանգներին ու միայն մանկահասակ Արտաշեսին էր հաջողվել ողջ մնալ: Տարիներ անց Արտաշեսը ոչ միայն վրեժխնդիր է լինում Երվանդից՝ սպանելով նրան ճակատամարտի ընթացքում, այլև վերանվաճում է իր երկիրը:

**Բարեպաշտը**

Ժողովուրդն իր սիրելի գահակալին բազմաթիվ կոչումներ ու տիտղոսներ է շնորհել: Արձանագրություններում Արտաշես արքայի անվան կողքին օգտագործվում են «Բարի», «Բարեպաշտ» կոչումները: Պատմական ընթացքը, սակայն, շեշտը դրեղ Արտաշեսի ուժի ու հզորության վրա՝ նրան արժանացնելով՝ «Մեծ», «Աշխարհակալ» տիտղոսներին:

---

<sup>6</sup>(Մեր Հաղթանակները, հտ. Ա, էջ 161-167):

## **«Արտաշես և Սաթենիկ»**

Արտաշեսի մասին պատմող ավանդություններից ամենամեծ ժողովրդականությունն է վայելում Արտաշեսի և Սաթենիկի սիրո մասին պատմությունը, որ մեզ փոխանցել է Մովսես Խորենացին: Պատմահայրը նաև վկայում է, որ այս պատումը տարածված էր ժամանակի հեքիաթասացների, գուսանների, երգիչների մոտ: Ավանդագրույցը ներկայացնում է, թե ինչպես է Արտաշես արքան ծնկի բերում Կովկասյան լեռնականներին և որոշիչ ճակատամարտի ընթացքում գերավում ալանաց արքայադստեր՝ Սաթենիկի սիրտն ու վերջինիս կնության առնում:

**Հեծավ արի արքայն Արտաշես ի սեան գեղեցիկ**

**Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,**

**Եւ անցեալ որպէս զարծուի սրաթել ընդ գետն,**

**Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝**

**Ընկեց ի մէջք օրիորդին ալանաց,**

**Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,**

**Արագ հասուցանելով ի բանակն իւր:**

**Մենք փող էինք փչում և թմբուկ զարկում...**

Մեկ այլ հատկանշական ավանդագրույց պատմում է Արտաշես Մեծի մահվան մասին: Հայոց արքան արդեն տարեց էր և հիվանդ, երբ Աբեղո իշխանին ուղարկում է Անահիտ աստվածամոր տաճարը՝ առողջություն խնդրելու: Մինչ Աբեղոն կհասցներ վերադառնալ, Արտաշեսն արդեն մահվան շեմին էր: Ըստ ավանդագրույցի, որը մեզ հասել է Գրիգոր Մագիստրոսի շնորհիվ, կանգնելով մահվան առար հայոց արքան ասում է՝

**Ո՞վ կտա ինձ ծխանի ծուխը**

**Եվ առավոտը նավասարդյան,**

**Եղնիկների վազելը և եղջերուների վարգելը,**

**Մենք փող էինք փչում և թմբուկ զարկում...**

**Ինչպես օրենքն էր թագավորների:**

Արտաշես Առաջինի մահը մեծ ցավ էր ողջ հայ ժողովրդի համար, ասում են՝ շատերն ինքնասպան էին լինում սիրելի գահակալի մահվան վշտից: Ականատես լինելով այդ զարհուրելի տեսարանին, Արտավազը՝ Արտաշեսի որդին ասում է՝

**«Դու մեռար և քեզ հետ տարար շատերին, ավերակների վրա ինչպե՞ս թագավորեմ...»**

Արտաշես արքայի հանդեպ սիրո վեջին դրսևորումն այն էր, որ նրա գահակալությունից դարեր անց հայոց գահին բազմող օտարները անվանափոխվում էին ու վերցնում հենց Արտաշես անունը՝ հայ մարդկանց սրտերը գրավելու նպատակով...

Ըստ հայոց ավանդապատման, մ.թ.ա. 220 թվականին Երվանդ Դ արքան բռնագրավել էր հայոց գահը դրա օրինական ժառանգներից, այդ թվում՝ Արտաշեսից, Երվանդը սպանել էր բոլոր թագաժառանքներին ու միայն մանկահասակ Արտաշեսին էր հաջողվել ողջ մնալ: Տարիներ անց Արտաշեսը ոչ միայն վրեժխնդիր է լինում Երվանդից՝ սպանելով նրան ճակատամարտի ընթացքում, այլև վերանվաճում է իր երկիրը:

**Իսկ պատամազիտական փաստերը վկայում են՝**

Մ.թ.ա. 200 թվականին Մելիկյան կայսրությունը նվաճում է Հայաստանը, գահընկեց անում և սպանում Երվանդին: Այդ տարիներին Արտաշեսը ծառայում էր սելևկյան բանակում որպես զորավար: Անտիոքոս Գ Մեծը Հայաստանի կառավարիչ է նշանակում հենց Արտաշեսին: Պատմական զարգացումները կտրուկ շրջադարձի են ենթարկվում Հռոմեական կայսրության հզորացմանը զուգընթաց: Արդյունքում մ.թ.ա. 190 թվականին Մագնեսիայի ճակատամարտում հռոմեական բանակը ծնկի է իջեցնում Մելիկյաններին: Պատմությունների վերոնշյալ ընթացքը պարարտ հող է դառնում Արտաշեսի համար՝ իր երկրի շահերն առաջ տանելու գործում:

**Վերջինս ապստամբում է Մելիկյանների դեմ ու իրեն հռչակում Մեծ Հայքի թագավոր, իր երկիրն՝ անկախ պետություն:**

**Սկիզբ է առնում Արտաշեսյան հարստությունը...**

Արտաշեսն անմիջապես հանձն առավ իր երկրի սահմանները ամբողջացնելու գործը, գրավեց հայկական ծայրագավառները, Փայտակարանը, Կասպիականը, Գուգարքը, Տմորիքը: Հատկանշական է, որ Արտաշեսը՝ բոլոր հնարավորություններն

ունենալով, իր պետությանը չմիացրեց Ծոփքը, Փոքր Հայքը և Կոմագենեն, քանի որ այդտեղ գահակալում էին նրան դաշնակից և արյունակից հայ գահակալներ:

*Արտաշեսի նվաճումների մասին հույն պատմիչ Ստրաբոնը գրեց՝*

**«...Այսպիսով բոլորը միալեզու եղան»:**

Վրա հասավ բարեփոխումների ժամանակը, ու Արտաշեսն այդ գործում հաջողեց: Նա սկսեց հողային բարեփոխումներից:

Մոտ մ. թ. ա. 180 թվականին Արտաշեսը հրապարակում է հրամանագիր հողային բարեփոխման վերաբերյալ, որի համաձայն՝ մասնավոր հողային տնտեսությունների՝ ագարակներ սահմանները հստակորեն սահմանազատվում են համայնքին պատկանող հողերից: Այս հրամանագիրը մի կողմից օրինականացնում էր ագարակատերերի մինչ այդ կատարած գավթումները, իսկ մյուս կողմից պահպանում էր համայնքային սեփականությունը:

*Պատմահայր Խորենացին գրում է՝*

**«Արտաշեսի ժամանակ մեր հայոց աշխարհում անմշակ հող չէր մնացել՝ ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, այնքան էր շենացել երկրիր»:**


Բացի այդ, Արտաշեսը բարելավել է երկրի կառավարման մոդելն ու բանակի ստրատեգիկ գոծունեությունը. նա երկիրը վարչականորեն բաժանել է 120 ստրատեգիաների, որոնք կառավարել են ստրատեգոսները: Արտաշես Ա մեծացրել և կանոնավորել է բանակը, այն բաժանել չորս կողմնապահ զորավարությունների, կազմավորել արքունի գործակալությունները: Խրախուսել է քաղաքաշինությունը, զիտության և արվեստի զարգացումը:

Այրարատյան դաշտում, Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում Արտաշես Առաջինը հիմնադրեց հայոց Արտաշատ մայրաքաղաքը:

*Հույն պատմիչ Պլուտարքոսը գրում է՝*

**«Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»:**

Արտաշեսը վախճանվում է տարեց հասակում, նրա անունը մնում է հայոց պատմության ամենավառ էջերում, իսկ դերն ու դիրքն ավելի ամրապնդվում իր՝ հզոր հաջորդների շնորհիվ:



## ԳՐԱԿԱՆՈՒՅԹՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան, (հ. 2, էջ 139):
2. <https://martinatoyannd.wordpress.com/2020/11/16/%D5%A1%D6%80%D5%B%D5%A1%D5%B7%D5%A5%D5%BD-%D5%A1-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF-%D6%87-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A1%D5%BF%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1/>
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, ԳիրքԲ, ԳլուխԾԳ:
4. Ստրաբոն, Աշխարհագրություն, XI, 14
5. Պլուտարքոս, Զուգահեռական սագրություններ, Լուկուլլոս, XXXI:
6. (Մեր Հաղթանակները, հտ. Ա, էջ 161-167):
7. <https://www.vnews.am/culture/artashes-arqan-avandazruycnerum/>